Որոշ մարդիկ շարունակում են կրկնել մյուսների խոսքերը, պատճառ հանդիսանալով մարդկանց խնդիրների, որը հանդիսանում է մարդկանց խզված հարաբերությունների և ատելության զգացման աճի պատճառ: Ալլահը հանդիմանում է նրան, ով այդպես է վարվում (Իմաստային մեկնաբանություն). «**Եվ մի հնազանդվիր յուրաքանչյուրին, ով շատ է երդվում- և համարվում է անարժեք, զրպարտիչ, անցնում է զրպարտության** »: (ալ-Քալամ 68:10-11)

Հուդայֆիան հաղորդեց, որ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Ոչ մի ականջ դնող չի մտնի Դրախտ»: (Հաղորդեց ալ-Բուխարին տես ալ-Ֆաթհ 10/472; «Ականջ դնողը» այստեղ վերաբերում է անհատին, ով ականջ է դնում այլոց առանց նրանց իմացության, այնուհետ գնում և պատմում է մյուսներին, թե ինչ է լսել):

Իբն Աբբասը ասաց. «Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) անցնում էր Մեդինայի այգիներից մեկով և լսեց երկու մարդկանց ձայն, ում պատժում էին իրենց գերեզմաններում: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Նրանց պատժում են, սակայն ոչ մեծ մեղքի համար; նրանցից մեկը սովորություն չուներ իրեն մաքրել փոքր կարիքից հետո և մյուսը սովորություն ուներ տարածել վնասակար զրպարտություն...» (Հաղորդեց ալ-Բուխարին, տես Ֆաթհ ալ-Բաարի 1/317)

(وَلَا تُطِعْ كُلَّ حَلَّافٍ مَهِينٍ (١٠) هَمَّازٍ مَشَّاءٍ بِنَمِيمٍ (١١)) القلم/١١.

وعن حذيفة مرفوعا: " لا يدخل الجنة قتات " رواه البخاري.
وعن ابن عباس قال مر النبي صلى الله عليه وسلم بحائط [بستان] من حيطان المدينة فسمع صوت إنسانين يعذبان في قبورهما فقال النبي صلى الله عليه وسلم: " يعذبان، وما يعذبان في كبير – ثم قال – بلى [وفي رواية: وإنه لكبير] كان أحدهما لا يستتر من بوله وكان الآخر يمشي بالنميمة... " رواه البخاري

Տվյալ մեղքի վատագույն ձևը ամուսնու և կնոջ միջև դժվարություն պատճառելն է կամ հակառակը, կամ որևէ մեկի ղեկավարին պատմելը, թե ինչ են մյուս աշխատակիցները ասում, որպեսզի խնդիր առաջանա: Այս ամենը հանդիսանում են հարամ:

<u>Մարդկանց տներ այցելությունը առանց թույլատվության</u>

Ալլահն ասում է (Իմաստային մեկնաբանություն),

« **Օվ դուք, ովքեր հավատացել եք. Մի մտեք այլոց տները, ինչպես ձերը, մինչ դուք չխնդրեք թույլտվություն և ողջունեք այնտեղ գտնվողներին...** » (ալ-Նուռ 24:27)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) բացատրեց թույլտվության պատճառը: Այն անհրաժեշտ է, տանը անձնական որևէ բան չտեսնելու նպատակով. «Թույլտվության կանոնը հաստատվել է հանուն չտեսնելու»: (Հաղորդեց ալ-Բուխարին,տես Ֆաթհ ալ-Բաարի, 11/24 )

قال تعالى {يَا أَيُّهَا الَّذِينَ آمَنُوا لَا تَدْخُلُوا بُيُوتًا غَيْرَ بُيُوتِكُمْ حَتَّى تَسْتَأْنِسُوا وَتُسَلِّمُوا عَلَى أَهْلِهَا ذَلِكُمْ خَيْرٌ لَّكُمْ لَعَلَّكُمْ تَذَكَّرُونَ}النور/27،

وقال رسول الله صلى الله عليه وسلم: " إنما جعل الاستئذان من اجل البصر" رواه البخاري

Մեր օրերում, երբ տները և շենքերը բավականին մոտ են մեկը մյուսին կամ նույնիսկ կցված են և դռները և պատուհանները դեմ հանդիման են,մեծանում է մեկը մյուսին տեսնելու հարևանների հնարավորությունը: Շատերը չեն իջեցնում իրենց հայացքը և նրանք, ովքեր ապրում են բարձր հարկերում, կարող են դիտավորյալ ներքև նայել իրենց առաստաղներից և պատուհաններից հարևան տները: Սա հանդիսանում է դավաճանության գործողություն և իրենց հարևանների սեփականության ոտնահարում, ինչպես ուղղի, որը առաջնորդում է հարամ արարքների: Սա հանգեցրել է փորձանքի և նողկանքի և այն փաստը, որ Շարիաթը հաշվի է առնում լրտեսի

ականատես լինելը որպես անարժեք խնդիր, էության լրջության ապացույցն է: Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Նա, ով նայում է մեկ ուրիշի տանը առանց թույլատվության, ապա նրանց թույլատրվում է հանել նրա աչքը»: Հաղորդեց Մուսլիմ 3/1699 Ըստ մեկ այլ զեկույցի, նա ասաց. «Հանեք նրա աչքը և չի լինի ոչ մի պատիժ կամ հատուցում»: (Հաղորդեց Իմաամ Ահմեդ 2/385; տես նույնպես Սահիիհ ալ-Ջաամի 6022)

" من اطلع في بيت قوم بغير إذنهم فقد حل لهم أن يفقئوا عينه " رواه مسلم 3/1699، وفي رواية " ففقئوا عينه فلا دية له ولا قصاص "

[رواه الإمام أحمد 2/385 وهو في صحيح الجامع 6022.

**Երկուսի անձնական զրույցը, երրորդի ներկայությամբ**

Սա հանդիսանում է հասարակական հավաքույթների խնդիրներից և ուղղիներից մեկը, ըստ որի Շեյթանը բաժանում է մահմեդականներին և ստիպում է, որ ոմանք ատեն մյուսներին: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) բացատրում է կանոնը և այնտեղ թաքնված իմաստությունը. «Եթե դուք երեքն եք, ապա երկուսդ երրորդի ներկայությամբ չպետք է գաղտնի զրուցեք, մինչ ձեզ մյուսները չմիանան, որովհետև դա կտխրեցնի նրան»: (Հաղորդեց ալ-Բուխարի, տես Ֆաթհ ալ Բաարի 11/83)

" إذا كنتم ثلاثة فلا يتناجى رجلان دون الآخر حتى تختلطوا بالناس أجل(أي من أجل كما ورد في بعض الروايات) أن ذلك يحزنه " رواه البخاري

Սա նույնպես ներառում է երեք անհատին, չորրորդի ներկայությամբ և այլն և երբ երկուսը զրուցում են մի լեզվով, որը երրորդը չի հասկանում, որովհետև սա անկասկած արհամարհանք է երրորդի նկատմամաբ և տպավորություն է ստեղծվում, որ նրանք փորձում են վիրավորել նրան և այլն:

**Իսբաալ-հանդերձ, որը ոտքի կոճերից ներքև է.**

Այն բաներից մեկը, որը մարդիկ աննշան են համարում, չնայած նրա, որ Ալլահի տեսանկյունից լուրջ է, իսբաալն է, որը նշանակում է հանդերձը մինչ կոճերը երկարեցնելը; ոմանց հանդերձը հասնում է մինչ հատակը և մյուսներինը քարշ է գալիս նրանց ետևից:

Աբու (Դհարրը, թող Ալլահը գոհանա նրանով) հաղորդեց, որ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Գոյություն ունեն երեքը, որոնց հետ Ալլահի չի խոսի Հարության Օրը, ոչ էլ կնայի, ոչ էլ կգովաբանի. Մեկը, ով կրում է իր ներքնաշորերը կոճերից ներքև; մեկը, ով մյուսներին հիշեցնում է իր բարիքների կամ նվերների մասին և մեկը, ով իր արտադրանքը վաճառում է ստի և կեղծ երդումների միջոցով»: (Հաղորդեց Մուսլիմ 1/102)

عن أبي ذر رضي الله عنه مرفوعا:" ثلاثة لا يكلمهم الله يوم القيامة ولا ينظر إليهم ولا يزكيهم ولهم عذاب أليم: المسبل (وفي رواية: إزاره) والمنان (وفي رواية: الذي لا يعطي شيئا إلا منه) والمنفق سلعته بالحلف الكاذب " رواه مسلم 1/102.

Նա, ով ասում է, «Ես չեմ կրում իմ հանդերձը կոճերից ներքև ամբարտավանությունից դրդված» փաստացի իր

գովքն է անում, որը անթույլատրելի է: Զգուշացումը իսբաալի դեմ տրվում է բոլորին, անկախ նրանք այդ անում են ամբարտավանությունից դրդված, թե ոչ, ինչպես Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Ներքնաշորի յուրաքանչյուր հատված, որը կոճից ներքև է, Դժոխքում է»: (Հաղորդեց Իմամ Ահմեդ 6/254; տես նույնպես Սահիհի ալ-Ջաամի 5571)

" ما تحت الكعبين من الإزار ففي النار " رواه الإمام أحمد 254/6

وهو في صحيح الجامع 5571.

Նա, ում իսբաալը ամբարտավանության արդյունք է, ավելի դաժան կերպով կպատժվի, քան նա, ով այդպիսի մտադրություն չունի, ինչպես ասել է Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն). «Նա, ով քարշ է տալիս իր հանդերձը հպարտությունից դրդված, Ալլահի չի նայի նրան Հարության օրը»: (Հաղորդեց ալ-Բուխարին, հ. 3465

" من جر ثوبه خيلاء لم ينظر الله إليه يوم القيامة " رواه البخاري رقم

3465

, ալ-Բաղա հրատարակչություն) – սա միացնում է երկու մեղքերը մեկ գործողության մեջ: Կոճից ներքև ցանկացած հանդերձ կրելը հարամ է համարվում, ինչպես նշել է Իբն Ումարի (թող Ալլահը գոհանա նրանով և նրա հորով) պատումը. «Իսբաալը կարելի է կրել իզաարի, (ներքնաշորի), քամիիսի, (վերնաշապիկի կամ վերին հանդերձի) և ամաամահի (գլխափաթթոցի) միջոցով, ով քարշ է տալիս դրանցից ցանկացած մի հատված հատակին

ելնելով հպարտությունից, Ալլահը չի նայի նրան Հարության օրը»: (Հաղորդեց Աբու Դաուդը 4/353; տես նույնպես Սահիհ ալ- Ջաամի 2770 )

حديث ابن عمر رضي الله عنهما مرفوعا: " الإسبال في الإزار والقميص والعمامة من جر منها شيئا خيلاء لم ينظر الله إليه يوم القيامة " رواه أبو داود 353/4 وهو في صحيح الجامع 2770.

Կանանց թույլատրվում է երկարեցնել իրենց հանդերձը մեկ կամ երկու ափաչափ, որպեսզի ծածկեն ոտքերը կամ որպես պաշտպանություն այնպիսի երևույթներից ինչպիսիք են քամին և այլն, սակայն չի թույլատրվում անել ավելին քան այդ, ինչպես անում են հարսանյաց զգեստների հետ, որոնք նմանվում են գնացքների մի քանի մետր, որը պահում են հարսնացուի ետևից:

## Տղամարդկանց ցանկացած տեսակի ոսկու կրելը

Աբու Մուսա ալ- Աշհարին, թող Ալլահը գոհանա նրանով, հաղորդեց, որ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Մետաքսը և ոսկին թույլատրվում է իմ ումմայի իգական սեռի ներկայացուցիչներին և արգելվում է արական սեռի ներկայացուցիչներին»: (Հաղորդեց Իմաամ Ահմեդ 4/393; տես նույնպես Սահիհ ալ-Ջաամի 207)

عن أبي موسى الأشعري رضي الله عنه مرفوعا: " أحل لإناث أمتي الحرير والذهب وحرم على ذكورها " رواه الإمام أحمد 393/4 انظر صحيح الجامع 207.

Մերօրյա շուկան լցված է տղամարդկանց համար ձևավորված նյութերի քանակով, ինչպիսիք են ժամացույցները, ակնոցները, կոճակները, գրիչները, շղթաները և այսպես կոչված 'մեդալյոնները' ,որոնք պատրաստված են տարբեր տեսակի ոսկուց կամ լիարժեք ոսկեպատված են: Ընդհանուր մեղքերից մեկը այն է, որ տեղի է տղամարդու ոսկյա ժամացույցների գների մրցակցություն:

Իբն Աբբասը թող Ալլահը գոհանա նրանով հաղորդեց, որ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) մի տղամարդ տեսավ, ով կրում էր ոսկյա մատանի; նա վերցրեց այն և մի կողմ շպրտեց ասելով. «Արդյո՞ք ձեզանից որևէ մեկը կարող է վերցնել այրվող մոխիրը Դժոխքից և պահել իր ձեռքում»: Այն բանից հետո, երբ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) հեռացավ, մեկ ուրիշը առաջարկեց տղամարդուն. «Ինչու՞ դու չես վերցնում մատանին և օգուտ քաղում դրանից, վաճառելով »: Նա ասաց. «Ոչ, Ալլահի անունով, ես երբեք այն ետ չեմ վերցնի, երբ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) գցել է այն մի կողմ»: (Հաղորդեց Մուսլիմ 3/1655)

عن ابن عباس رضي الله عنهما أن رسول الله صلى الله عليه وسلم رأى خاتما من ذهب في يد رجل فنزعه، فطرحه، فقال: " يعمد أحدكم إلى جمرة من نار فيجعلها في يده ؟! " فقيل للرجل بعدما ذهب رسول الله صلى الله عليه وسلم خذ خاتمك انتفع به قال: لا و الله لا آخذه أبدا وقد طرحه رسول الله صلى الله عليه وسلم. رواه مسلم 3/1655.

**Կանայք, ովքեր կրում են կարճ, նեղ կամ թափանցիկ հանդերձ**

Մերօրյա ուղղիներից մեկը, որով մեր թշնամիները հարձակում են գործում մեր վրա, նրանց ձևավորած և առաջարկած նորաձևությունն է, որը սիրելի է դարձել Մահմեդականներին: Տվյալ նորաձևությունը ոչինչ չի քողարկում, որովհետև դրանք չափազանց կարճ, նեղ կամ թափանցիկ են, շատերը անհարմար է կրել նույնիսկ այլ կանանց կամ մահրամների առջև: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց մեզ, որ նմանատիպ հանդերձները կհայտնվեն վերջին ժամանակների կանանց մոտ, ինչպես հաղորդում է Աբու Հուրեյրայի (թող Ալլահը գոհանա նրանով) պատումը. «Գոյություն ունեն Դժոխքի մարդկանց երկու տեսակ, որոնց ես տեսել եմ. Մարդիկ, ովքեր ունեն մտրակներ, նմանվող եղջերավոր անասունների պոչերի,որոնցով նրանք հարվածում են մարդկանց և կանայք, ովքեր հագուստ են կրում, սակայն մերկ են, քայլում են գայթակղիչ քայլվածքով, իրենց մազերով նմանվելով մի կողմ շրջված ուղտերի սապատների: Նրանք չեն մտնի Դրախտ կամ նույնիսկ զգան անուշաբույրը, չնայած անուշաբույրը կարելի է զգալ այսպիսի- այնպիսի հեռավորության վրա»: (Հաղորդեց Մուսլիմ 3/1680)

عن أبي هريرة رضي الله عنه مرفوعا: " صنفان من أهل النار لم أرهما: قوم معهم سياط كأذناب البقر يضربون بها الناس ونساء كاسيات عاريات مميلات مائلات رؤوسهن كأسنمة البخت المائلة، لا يدخلن الجنة ولا يجدن ريحها وإن ريحها ليوجد من مسيرة كذا وكذا "

رواه مسلم 3/ 1680

Տվյալ հանդերձը ներառում է որոշ կանացի հագուստներ, որոնք եզրերից ունեն երկար կտրվածքներ կամ կտորներ

պատռված այստեղ և այնտեղ, երբ կրողը նստում է, նրա աուրան (այսինքն ամենը) բացառությամբ դեմքի և ձեռքերի տեսանելի են դառնում, առանձնացնելով այն փաստը, որ նմանատիպ հանդերձ կրելով կանայք նմանվում են քուֆֆարի և հետևում են նրանց նորաձևությանը և հագուստները ցուցադրելու միտմանը: Մենք խնդրում ենք Ալլահին մեզ ապահովել այդ ամենից: Հանդերձի հետ կապված մեկ այլ լուրջ խնդիր է վատ պատկերները, որոնք երևում են որոշ հագուստների վրա, ինչպիսիք երգիչների և ռոք խմբերի պատկերները, գինու շշերը, Իսլամի մեջ արգելված երևակայական արարածների պատկերները, խաչերը, անբարո ակումբների և հասարակությունների նշանաբանները, կամ վատ խոսքերը , որոնք մարդկանց պատիվ չեն բերում և որոնք կարող են գրված լինել օտար լեզուներով:

**<u>Տղամարդկանց և կանանց արհեստական կամ բնական մազերից կեղծամ և հերակալներ կրելը.</u>**

Ասմաա բնթ աբու Բաքրին ասաց. «Մի կին եկավ Մարգարեի (Խ.Ա.Ո.Ն) մոտ և ասաց. 'օվ Ալլահի Մարգարե, ես մի դուստր ունեմ, ով պատրաստվում է ամուսնանալ; նա ջերմ ուներ և շատ մազ էր կորցրել – արդյո՞ք ես պետք է կեղծ մազ ամրացնեմ նրա գլխին:' Նա ասաց.' Ալլահը անիծել է նրան, ով կեղծ մազեր է ամրացնում և նրան, ով անում է այդ'»: (Հաղորդեց Մուսլիմ 3/1676) Ջաբիր իբն Աբդուլլահն ասաց. «Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) խիստ հրահանգ արձակեց, որ ոչ մի կին չպետք է ավելացնել որևէ բան գլխին»: (Հաղորդեց Մուսլիմ 3/1679)

عن أسماء بنت أبي بكر قالت جاءت امرأة إلى النبي صلى الله عليه وسلم فقالت يا رسول الله إن لي ابنة عريسا أصابتها حصبة فتمرق (أي تساقط) شعرها أفأصله فقال: " لعن الله الواصلة والمستوصلة "

رواه مسلم 3/1676. وعن جابر بن عبدالله قال: زجر النبي صلى الله

عليه وسلم أن تصل المرأة برأسها شيئا " رواه مسلم 3/1679.

Սրա օրինակներ են այն, ինչ այժմ հայտնի են որպես կեղծամներ և հերակալներ և այլ չարիքներ, որոնցով լցված են սրահները: Նույնպես ներառվում են արհեստական կեղծամները որոնք կրում են դերասանները և դերասանուհիները, ովքեր զուրկ են բարոյականությունից:

<u>**Տղամարդիկ նմանակում են կանանց և կանայք նմանակում են տղամարդկանց հանդերձով, խոսքով և արտաքինով**</u>

Ֆիթրահի (մարդկության բնական շեղման) մաս է այն, որ տղամարդիկ պետք է պահպանեն առնականությունը, որը Ալլահն է արարել նրանց մեջ և կանայք պետք է ներկայացնեն կանացիություն, որը Ալլահն է արարել նրանց մեջ: Առանց որի մարդկային պարկեշտ կյանքը դառնում է անհնար: Տղամարդը նմանակում է կնոջը և հակառակը, մի բան է, որը դեմ է մարդու բնածին բնությանը (ֆիթրահ) և դռներ է բացում կոռուպցիայի համար և տարածում է անկարգությունը: Շարիաթի մեջ իշխող է այն, որ երբ հայտարարվում է, որ անհատը, ով անիծված արարք է գործել, ապա այդ հանդիսանում է հարամ: Իբն Աբբասը, (թող Ալլահը գոհանա նրանով և նրա հորով) հաղորդեց, որ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Ալլահը անիծել է տղամարդուն, ով իրեն նմանեցնում է

կնոջը և կնոջը, ով իրենց նմանեցնում է տղամարդուն»: (Հաղորդեց ալ-Բուխարին; տես ալ-Ֆաթհ 10/332) Իբն Աբբասը, (թող Ալլահը գոհանա նրանով և նրա հորով) նույնպես հաղորդեց, որ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Ալլահը անիծել է թուլամորթ տղամարդկանց և առնական կանանց»: (Հաղորդեց Ալ-Բուխարին, տես ալ-Ֆաթհ 3/10/333 )

عن ابن عباس رضي الله عنهما مرفوعا: " لعن رسول الله المتشبهين من الرجال بالنساء والمتشبهات من النساء بالرجال " رواه البخاري.
وعن ابن عباس رضي الله عنهما مرفوعا: " لعن رسول الله المخنثين من الرجال والمترجلات من النساء " رواه البخاري

Նմանությունը կարող է լինել նրանց քայլվածքի, շարժումների և խոսելաձևի մեջ:

Նմանապես երկու սեռերին էլ չի թույլատրվում մեկը մյուսին նամանակել հանդերձի մեջ կամ կրել որևէ բան, որը բնորոշ է մյուս սեռին:Այսպիսով տղամարդուն չի թույլատրվում կրել վզնոց, ապարանջան, ականջող և ոտքի օղ և այլն, ինչպես տարածված է հիփփիների և այլոց մոտ: Կանանց չի թույլատրվում կրել բաներ, որոնք բնորոշ են տղամարդկանց , ինչպես թաուբ (երկար հանդերձ) որոնք կրում են արաբական երկրների տղամարդիկ, վերնաշապիկներ և այլն, ինչ որ նա կրի ,պետք է տարբեր լինի ոճի, գույնի և մանրուքների մեջ: Վկայությունը, որ երկու սեռերը չպետք է նմանակեն միմյանց հանդերձի մեջ, գտնվում է պատման մեջ, որը հաղորդել է Աբու Հուրեյրան (թող Ալլահը գոհանա նրանով). «Ալլահը անիծել է տղամարդուն, ով կրում է կնոջ հանդերձ և կնոջը, ով կրում

է տղամարդու հանդերձ»: (Հաղորդեց Աբու Դաուդը 4/355; տես նույնպես Սահիհ ալ-Ջաամի 5071)

عن أبي هريرة رضي الله عنه مرفوعا: " لعن الله الرجل يلبس لبسة المرأة، والمرأة تلبس لبسة الرجل " رواه أبو داود 4/355 وهو في صحيح الجامع 5071.

**Վարսերը սև ներկելը**

Ճիշտ այն կարծիքն է, որ այդ հարամ է հանդիսանում, ի շնորհիվ զգուշացման, որը նշվել է պատման մեջ. «Ժամանակի վերջում կլինեն մարդիկ, ովքեր ներկում են իրենց վարսերը սև, ինչպես աղավնիների բազմություն; նրանք երբեք չեն զգա Դրախտի բույրը»: (Հաղորդեց Աբու Դաուդը 4/419 տես նույնպես Սահիհ ալ-Ջաամի 8153)

" يكون قوم يخضبون في آخر الزمان بالسواد كحواصل الحمام لا يريحون رائحة الجنة " رواه أبو داود 4/419 وهو في صحيح الجامع 8153 .

Տվյալ գործունեությունը լայն տարածված է նրանց մեջ, ովքեր ունեն ճերմակ վարսեր, որոնք նրանք քողարկում են սև ներկի միջոցով; որը և առաջնորդում է շատ չարիքների, ինչպիսիք են նենգությունը և մարդկանց ստելը, հպարտանալով մի բանով, որը ճշմարիտ չէ: Ճշմարիտ է, որ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) սովորություն ուներ ներկել իր ճերմակ վարսերը հիննայով, որը տալիս էր դեղնավուն, կարմրավուն կամ շագանակագույն երանգ: Երբ Աբու Քուհաաֆահը, ում վարսերը և մորուքը այնքան ճերմակ

էին, որքան թուզաամահ բույսը, (որի տերևները և ծաղիկները ամբողջովին ճերմակ են) Մեքքայի Նվաճման օրը եկավ նրա մոտ,Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Փոխիր այդ որևէ բանով, սակայն խուսափիր սևից»: (Հաղորդեց Մուսլիմ 3/1663)

وقد صح أنه صلى الله عليه وسلم كان يغير الشيب بالحناء ونحوها مما فيه اصفرار أو احمرار أو بما يميل إلى اللون البني، ولما أتي بأبي قحافة يوم الفتح ورأسه ولحيته كالثغامة من شدة البياض قال عليه الصلاة والسلام " غيروا هذا بشيء واجتنبوا السواد " رواه مسلم 3/1663.

Ճշմարիտ տեսակետը այն է, որ կանայք նմանվում են տղամարդուն տվյալ պարագայում, նրանց չի թույլատրվում սև ներկել որևէ վարս, որի գույնը սև չէ:

<u>**Հանդերձանքի, պատերի կամ թղթի վրա աներևակայելի արարածների պատկերները**</u>

'Աբդուլլահ իբն Մասուդը, (թող Ալլահը գոհանա նրանով )հաղորդեց, որ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Մարդիկ, ում Ալլահը խստորեն կպատժի Հարության Օրը պատկերներ պատկերողներն են»: (Հաղորդեց ալ-Բուխարի տես ալ-Ֆաթհ 10/382) Աբու Հուրեյրան (թող Ալլահը գոհանա նրանով) հաղորդեց, որ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Ալլահն ասաց. 'Ով է գործում ավելի սխալ, քան մեկը ով փորձում է արարել Իմ արարածի պես մի բան; թող նա արարի ցորենի հատիկ կամ եգիպտացորենի հասկ...'» (Հաղորդեց ալ-Բուխարի, տես Ֆաթհ ալ-Բաարի 10/385) : Իբն Աբբասը, (թող Ալլահը գոհանա նրանով) ասաց.

«Յուրաքանչյուր պատկեր պատկերող կլինի Կրակի մեջ և յուրաքանչյուր պատկերի համար, որ նա արարել է նրան կտան հոգի և նրան կպատժեն Դժոխքում»: Իբն Աբբասը ասաց. Եթե դուք պետք է պատկերներ պատկերեք, նկարեք ծառեր և բաներ, որոնք հոգի չունեն»: (Հաղորդեց Մուսլիմ 3/1671 )

عن عبدالله بن مسعود رضي الله عنه مرفوعا: " إن أشد الناس عذابا عند الله يوم القيامة المصورون " رواه البخاري.

وعن أبي هريرة رضي الله عنه مرفوعا: " قال الله تعالى: (ومن أظلم ممن ذهب يخلق كخلقي فليخلقوا حبة و ليخلقوا ذرة...) " رواه البخاري.

وعن ابن عباس رضي الله عنهما مرفوعا: " كل مصور في النار، يجعل له بكل صورة صورها نفسا فتعذب في جهنم " قال ابن عباس: إن كنت لا بد فاعلا فاصنع الشجر وما لا روح فيه " رواه مسلم 1671/3

Տվյալ պատումները խստորեն նշում են, որ հարամ է հանդիսանում պատկերել աներևակայելի արարածների պատկերներ, լինեն դրանք մարդ կամ տարբեր տեսակի կենդանիներ, անկախ պատկերները երկուսը կամ տարածական երեքն են: Պատկերները արգելված են անկախ դրանց պատկերված, քանդակված, փորագրված կամ ձուլված լինելուց: Պատումները որոնք արգելում են պատկերել պատկերներ քողարկում են այս բոլոր միջոցները:

Մահմեդականը պետք է անխտիր ընդունի այն, ինչ ասում է Շարիաթը: Ոմանք կարող են ասել «Լավ, մենք չենք

երկրպագում տվյալ պատկերները կամ ծնկի գալիս դրանց առջև»: Սակայն, եթե դուք ավելի մոտիկ դիտեք և մտածեք վատ արդյունքներից միայն մեկի մասին, ըստ մեր ժամանակների տարածված պատկերների, դուք կհասկանաք տվյալ արգելքի իմաստությունը: Տվյալ վատ ազդեցությունը սադրանք է սեռական ցանկության, որը ի շնորհիվ տվյալ պատկերների առաջնորդում է անբարոյականության:

Մահմեդականը իր տանը չպետք է պահի որևէ աներևույթ արարածի պատկեր, որովհետև այն խոչընդոտում է հրեշտակներին մուտքը իր տուն:Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Հրեշտակները չեն մտնում տուն, որտեղ գոյություն ունի շուն կամ նկար»: (Հաղորդեց ալ-Բուխարի տես ալ-Ֆաթհ 10/380)

فإن النبي صلى الله عليه وسلم قال: " لا تدخل الملائكة بيتا فيه كلب ولا تصاوير " رواه البخاري

Շատ տներում կան նույնիսկ արձաններ, որոնցից որոշները ներկայացնում են քուֆարի աստվածներ, որոնք պահում են որպես ձևավորում, այս հանդիսանում է ավելի հարամ,քան այլ տեսակները, չկախված նկարները ավելի վատ են քան ուղղակի նկարները, որոնք կախված են: Որքան հաճախ են նկարները առաջնորդել փառաբանության և վշտի և այնուհետ հպարտության: Մենք չպետք է ասենք, որ պատկերները հիշողության համար են, քանի որ սիրելի մահմեդական ընկերների ճշմարիտ հիշողությունները սրտի մեջ են և նրանց հիշում են նրանց իսկ համար թողություն և գթասրտություն խնդրելով: Անհրաժեշտ է տեղափոխել բոլոր այս

պատկերները կամ ջնջել, բացառությամբ այն դեպքերի, երբ շատ դժվար է այդպես անել, ինչպես բոլոր պատկերները, որոնք սննդի փաթեթների վրա են, կամ հանրագիտարաններում և քաղվածքների գրքերում; նույնիսկ այդ դեպքում դուք պետք է փորձեք հեռացնել դրանք և զգույշ լինել որոշ գրքերի վատ նկարներից: Թույլատրելի է պահպանել որոշ անհրաժեշտ նկարներ, ինչպիսիք են ինքնության, վկայականների նկարները և նրանք, որոնց վրա քայլում են, օրինակ գորգերի վրայի պատկերները: «**Այսպիսով պահեք ձեր պարտավորվածությունները Ալլահի նկատմամբ և վախեցեք Նրանից այնքան, որքան կարող եք…**»: (ալ-Տագաաբուն 64:16)

(فَاتَّقُوا اللَّهَ مَا اسْتَطَعْتُمْ) التغابن/16.

## Կեղծել որևէ մեկի երազները

Ոմանք դիտավորյալ կեղծում են երազները և տեսիլքները , որոնք նրանք իրոք, չեն տեսել, որպես հոգևոր առավելության և ճանաչելիության կամ որոշ նյութական շահերի միջոցներ, կամ որպեսզի սարսափի մեջ պահեն իրենց թշնամիներին և այլն: Շատ հասարակ մարդիկ մեծ հավատք ունեն երազներին և հեշտորեն խաբվում են նմանատիպ ստերով: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) խստորեն զգուշացնում է նրան, ով այդպես է վարվում. «Ստի վատագույն տեսակներից մեկը այն է, որ մարդը հայտնում է իր պատկանելությունը ոչ իր իրական հորը, կամ հայտարարությունը , որ նա տեսել է որևէ բան, որը չի տեսել կամ վերագրել Ալլահի Մարգարեին (Խ.Ա.Ո.Ն)

խոսքեր, որ նա չի ասել»: (Հաղորդեց ալ- Բուխարին, տես ալ-Ֆաթհ 6/540 )Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն ) նույնպես ասաց. «Նրան, ով պնդում է, որ տեսել է երազ, որը նա չի տեսել, կհրամայեն կապել երկու հացահատիկ միասին և նա երբեք ի վիճակի չի լինի անել այդ...» (Հաղորդեց ալ-Բուխարին, տես ալ Ֆաթհ 12/427)

قال صلى الله عليه وسلم " إن من أعظم الفرى أن يدعي الرجل إلى غير أبيه أو يري عينه ما لم تر ويقول على رسول الله صلى الله عليه وسلم ما لم يقل " رواه البخاري.

وقال صلى الله عليه وسلم " من تحلم بحلم لم يره كلف أن يعقد بين شعيرتين ولن يفعل...الحديث " رواه البخاري

Հնարավոր չէ կապել երկու հատիկ միմյանց , այսպիսով պատիժը կհամապատասխանի ոճրին:

**Նստել կամ քայլել կամ բնական կարիքները հոգալ գերեզմանների վրա**

Աբու Հուրեյրան հաղորդեց, որ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Եթե ձեզանից որևէ մեկը նստեր այրվող ածուխի վրա և թույլ տար որ այն այրի իր հագուստները մինչ իր մաշկին հասնելը, այդ ավելի լավ նրա համար, քան գերեզմանի վրա նստելը»: (Հաղորդեց Մուսլիմ 2/667)

عن أبي هريرة رضي الله عنه قال قال رسول الله صلى الله عليه وسلم " لأن يجلس أحدكم على جمرة فتحرق ثيابه فتخلص إلى جلده خير له من أن يجلس على قبر " رواه مسلم 667/2

Ինչ վերաբերում է գերեզմանների վրա քայլելուն, մարդիկ անում են այդ և երբ անհատը թաղված է, դուք կարող եք

տեսնել մարդկանց, ովքեր հոգ չեն տանում, թե որտեղ են նրանք քայլում, նույնիսկ երբեմն կոշիկներով հարևան գերեզմաններում, առանց հարգանքի հանգուցյալի նկատմամբ: Տվյալ խնդրի լրջությունը ակնհայտ է Մարգարեի (Խ.Ա.Ո.Ն) խոսքերից. «Եթե ես քայլեյի ածուխի կամ սրի վրա կամ կարկատեի իմ կոշիկները իմ իսկ ոտքերով, ավելի լավ կլիներ ինձ համար, քան Մահմեդականի գերեզմանի վրա քայլելը»: (Հաղորդեց Իբն Մաջահ 1/449, տես նույնպես Սահիհ ալ-Ջաամի 5038)

"لأن أمشي على جمرة أو سيف أو أخصف نعلي برجلي أحب إلي من أن أمشي على قبر مسلم... " رواه ابن ماجة 1/499 وهو في صحيح الجامع 5038.

Այսպիսով, ի՞նչ կասեք նրանց մասին, ովքեր գերեզմանների վրա գործ կամ տներ են կառուցում: Ինչ վերաբերում է գերեզմանոցներում կարիքներ հոգալուն, սա մի արարք է, որը կատարում են բոլորովին անբարո մարդիկ: Երբ նրանք զգում են կարիքը, նրանք թռչում են գերեզմանոցի պատով և հանգուցյալներին անպատվում են իրենց տհաճ հոտով և անմաքուր թափոնների խնդրով: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Ես չէի կարծի, եթե այդ տեղի ունենար գերեզմանոցի կենտրոնում կամ շուկայի կենտրոնում» իբիդ – (այսինքն, բնական կարիքները հոգալը գերեզմանոցում նման է բացելուն աուրան և շուկայի կենտրոնում մարդկանց առջև բնության կարիք հոգալուն): Նրանք, ովքեր դիտավորյալ իրենց աղբը զցում են գերեզմանոցում, առավելապես որոնք լքված են կամ պատերը ավիրված են ներառվում են այս դատապարտման

մեջ: Նրանք ովքեր այցելում են գերեզմանոցները, որպես էթիկա պետք է հանեն իրենց կոշիկները, երբ ցանկանում են քայլել գերեզմանների միջով:

**Միզելուց հետո պատշաճ կերպով չմաքրելը**

Իսլամի գեղեցկություններից մեկը այն է, որ այն ուսուցանում է ամենը, ինչ զարգացնում և վերափոխում է մարդկությունը, ներառելով բնության կանչից հետո պատշաճ կերպով անմաքրությունը հեռացնելը:Սակայն, ոմանք անփույթ են այս խնդրի շուրջ և թույլ են տալիս, որ իրենց հանդերձները և մարմինները աղտոտվեն, դրանով իսկ իրենց աղոթքները անվավեր դարձնում: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց մեզ, որ սա է հանդիսանում անդրշիրիմյան պատիժների պատճառ: Իբն Աբբասը ասաց. «Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) անցնում էր Մեդինայի այգիներից մեկի կողքով և լսեց երկու մարդկանց ձայները, որոնք պատիժ էին կրում իրենց շիրիմների մեջ»: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Նրանց պատժում են, սակայն նրանց չեն պատժում որևէ մեծ մեղքի համար: Նրանցից մեկը սովորություն չուներ պատշաճ կերպով մաքրել իրեն միզելուց հետո և հաջորդը սովորություն ուներ տարածել վնասակար բամբասանք»: (Հաղորդեց ալ-Բուխարին, տես Ֆաթհ ալ-Բաարի 1/317)

فعن ابن عباس قال مر النبي صلى الله عليه وسلم بحائط [بستان] من حيطان المدينة فسمع صوت إنسانين يعذبان في قبورهما فقال النبي صلى الله عليه وسلم: " يعذبان، وما يعذبان في كبير – ثم قال – بلى [وفي رواية: وإنه لكبير] كان أحدهما لا يستتر من بوله وكان الآخر يمشي بالنميمة... " رواه البخاري.

بل أخبر النبي صلى الله عليه وسلم أن: " أكثر عذاب القبر في البول " رواه الإمام أحمد 2/326 وهو في صحيح الجامع 1213.

Իրոք, Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց, որ «շիրիմյան պատիժների մեծամասնության պատճառը միզելն է»: (Հաղորդեց Իմամ Աhմեդ 2/326; տես նույնպես Սահիհ ալ-Ջաամի 1213) Միզելուց հետո պատշաճ կերպով չմաքրելը նույնպես ներառում է անհարկի շտապողականություն, որպեսզի մարդիկ ավարտեն գործողությունը կամ դիտավորյալ միզեն այն դիրքով կամ վայրում, որտեղ մեզը կարող է ետ գալ կամ ճախողել մաքրել անմիջապես հետո կամ չմաքրել պատշաճ կերպով: Քուֆարների ժամանակակից նմանակումը այն աստիճանի է հասել, որ որոշ պետքարաններ տղամարդկանց համար պարունակում են պատին փակցված միզարաններ, որոնք տեսանելի են, այնպես, որ անհատը, ով գործածում է դա, անամոթաբար տեսանելի է յուրաքանչյուրի համար,ով մուտք է գործում կամ դուրս գալիս այնտեղից անմաքրության ընթացքում: Ուստի, նա համատեղում է երկու նողկալի և արգելված արարք մեկի մեջ.առաջինը չի թաքցնում իր մասնավոր մասերը մյուսների տեսադաշտից և միզելուց հետո իրեն պատշաճ կերպով չի մաքրում:

<u>**Գաղտնալսել մարդկանց , ովքեր դա չեն ցանկանում**</u>

Ալլահն ասում է (Իմաստային մեկնաբանություն). «... **Եվ, մի լրտեսեք միմյանց...**» (Ալ-Հուջուրաթ 49:12)

قال الله تعالى: (وَلَا تَجَسَّسُوا...) الحجرات/11

Իբն Աբբասը, (թող Ալլահը գոհանա նրանով) հաղորդեց , որ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Նա, ով ունկ է դնում մարդկանց խոսակցությանը առանց նրանց թույլտվության Հարության Օրը հալեցված կապար կլցվի նրանց ականջները...» (Հաղորդեց ալ-Տաբարանի Ալ Քաբիր աշխատության մեջ 11/248-249, նույնպես տես Սահիհ ալ-Ջաամի 6004)

عن ابن عباس رضي الله عنهما مرفوعا: " من استمع إلى حديث قوم وهم له كارهون صب في أذنيه الآنك يوم القيامة... " رواه الطبراني في الكبير 11/248–249 وهو في صحيح الجامع 6004

Եթե տվյալ անհատը այնուհետ գնում և իր լսած խոսակցության մասին պատմում է մյուսներին, խնդիրներ առաջացնելու նպատակով, ապա նրա լրտեսելու մեղքին ավելանում է մեկ այլը, ինչպես ասում է Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) «Գաղտնալսողները չեն մտնի Դրախտ»: (Հաղորդեց ալ-Բուխարին, տես Ֆատթ ալ-Բաարի 10/472 )

" لا يدخل الجنة قتات " رواه البخاري

**Վատ հարևան լինելը**

Ղուրանի մեջ Ալլահը պատվիրել է լավ վերաբերմունք հարևանների նկատմամբ (Իմաստային Մեկնաբանություն). «**Երկրպագեք Ալլահին և Նրա հետ ոչինչ մի միացրեք երկրպագության մեջ և լավ վերաբերվեք ծնողներին, ազգականներին, որբերին, աղքատներին, հարևաններին, ով մոտ է ազգակցական կապերով, հարևանին, ով օտար է, ձեր ընկերակցին, ուղևորին, որին դու հանդիպում եք և այն ստրուկներին, ովքեր ձեր աջ**

**ձեռքի տակ են: Իրոք, Ալլահը չի սիրում հպարտներին և պարծենկոտներին»**: (ալ-Նիսաա 4:36)

{وَاعْبُدُواْ اللّهَ وَلاَ تُشْرِكُواْ بِهِ شَيْئًا وَبِالْوَالِدَيْنِ إِحْسَانًا وَبِذِي الْقُرْبَى وَالْيَتَامَى وَالْمَسَاكِينِ وَالْجَارِ ذِي الْقُرْبَى وَالْجَارِ الْجُنُبِ وَالصَّاحِبِ بِالْجَنبِ وَابْنِ السَّبِيلِ وَمَا مَلَكَتْ أَيْمَانُكُمْ إِنَّ اللّهَ لاَ يُحِبُّ مَن كَانَ مُخْتَالاً فَخُورًا} النساء/36.

Ի շնորհիվ իր իրավունքների մեծության, հարևանին վնաս հասցնելը հարամ է: Աբու Շուրայհը (թող Ալլահը գոհանա նրանով) հաղորդեց, որ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Ալլահի անունով, նա չի հավատում Ալլահին, Ալլահի անունով, նա չի հավատում Ալլահին, Ալլահի անունով նա չի հավատում Ալլահին»: Նրան հարցրեցին, «Ո՞վ, ով Ալլահի Մարգարե:"Նա ասաց."Նա, ում վնասից իր հարևանը ապահով չէ»: (Հաղորդեց ալ-Բուխարին, տես Ֆաթհ ալ-Բաարի 10/443)

عن أبي شريح رضي الله عنه مرفوعا: " والله لا يؤمن والله لا يؤمن والله لا يؤمن، قيل ومن يا رسول الله ؟ قال: الذي لا يأمن جاره بوائقه " رواه البخاري

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) հարևանի գովքը կամ քննադատությունը համարեց անհատի բարիքի կամ չարիքի չափանիշ: Իբն Մասուդը (թող Ալլահը գոհանա նրանով) հաղորդեց, որ մի մարդ ասաց Մարգարեին (Խ.Ա.Ո.Ն) «Օվ, Ալլահի Մարգարե, ինչպե՞ս կարող եմ տեղեկանալ, թե իմ լավ կամ վատ վերաբերմունքի մասին»: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Եթե դուք լսում եք, որ ձեր հարևանը ասում է, ձեր լավ լինելու մասին, ապա դուք

հաջողակ եք և եթե դուք լսում եք, որ նա ասում է ձեր վատ լինելու մասին, ապա դուք լավը չեք»: (Հաղորդեց Իմամ Ահմեդ 1/402, տես նույնպես Սահիհ ալ-Ջաամի 623)

عن ابن مسعود رضي الله عنه قال: قال رجل للنبي صلى الله عليه وسلم: يا رسول الله كيف لي أن أعلم إذا أحسنت أو إذا أسأت فقال النبي صلى الله عليه وسلم " إذا سمعت جيرانك يقولون: قد أحسنت فقد أحسنت، وإذا سمعتهم يقولون: قد أسأت فقد أسأت " رواه الإمام أحمد 1/402 وهو في صحيح الجامع 623.

Հարևանին վնասելը կարող է լինել տարբեր միջոցներով, օրինակ թույլ չտալ նրան վերանորոգել փայտի կտորը պատի կամ ցանկապատի համար, ընդլայնել բնակարանը այնպես, որ ծածկվի նրա օդը կամ արևը առանց նրա թույլտվության; բացել պատուհանները նրա տունը դիտելու նպատակով, որպեսզի ներխուժեն իրենց մեկուսացվածությանը; խանգարել նրանց բարձր ձայներով, ինչպես բղավոցը, մուրճով հարվածը, այն ժամանակ, երբ նրանք քնած կամ հանգստանում են, կամ դռան դիմաց աղբ գցելը: Տվյալ արարքների մեղքը ավելանում է, երբ դրանք կատարվում են ընդդեմ հարևանների, ինչպես ասում է Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն). «Եթե տղամարդը շնանում է տաս կանանց հետ, ավելի լավ է քան շնանա իր հարևանի կնոջ հետ և եթե տղամարդը գողություն կատարի տաս տներից, ավելի լավ է նրա համար, քան գողություն կատարի իր հարևանի տանից»: (Հաղորդեց ալ-Բուխարին ալ-Ադաբ ալ-Մուֆրադ հ. 103; տես նույնպես ալ-Սիլսիլահ ալ Սահիհիահ 65)

قال النبي صلى الله عليه وسلم: " لأن يزني الرجل بعشر نسوة أيسر عليه من أن يزني بامرأة جاره.. لأن يسرق الرجل من عشرة أبيات أيسر عليه من أن يسرق من بيت جاره " رواه البخاري في الأدب المفرد رقم 103 وهو في السلسلة الصحيحة 65

Որոշ դավաճաններ օգտվում են առիթից և գիշերը հարևանի բացակայության ժամանակ մտնում են տուն և անբարո արարք են գործում:Անեծք նրանց ցավալի Օրվա պատժից:

<u>Կտակ գրելը ժառանգներից մեկին վնասելու նպատակով</u>

Շարիաթի հիմնական սկզբունքներից մեկը այն է, որ չպետք է ոչ վնասել, ոչ էլ փոխանակել այն: Դրա օրինակներից է, կտակ գրել, զրկելով մեկ կամ մի քանի օրինական ժառանգներին իրենց իրավունքներից: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) զգուշացրել է նմանատիպ անհատին «Նա, ով վնասում է ուրիշներին, Ալլահը վնասում է նրան և ով նա, ով դժվարություններ է ստեղծում մյուսներին, Ալլահը դժվարություններ ստեղծում նրա համար»: (Հաղորդեց Իմամ Ահմեդ 3/453; տես նույնպես Սահիհ ալ-Ջաամի 6348)

" من ضار أضر الله به ومن شاق شق الله عليه " رواه الإمام أحمد 3/453 انظر صحيح الجامع 6348

Միջոցներից մեկը, որով անհատը կարող է վնասել մյուսներին ժառանգի իրավունքները մերժելն է, կամ ժառանգին Շարիաթի օրենքներից վեր տալը, կամ երրորդ անձին ավելի քան մեկ երրորդը կտակելը:

Այն վայրերում, որտեղ մարդկանց դժվար է հաստատել Շարիաթի կանոնը, դժվար կլինի անհատին վերցնել այն, ինչ ըստ Ալլահի շնորհվել է նաև, որովհետև դատարանները, որոնք հիմնված են մարդու կերտած օրենքների վրա, կարող են անարդար իրավաբանի մահապատժի վճռի պատճառ դառնալ: «**Անեծք նրանց այն բանի համար, ինչ իրենց ձեռքերը գրել են և անեծք նրանց ,ինչ նրանք վաստակում են դրա միջոցով**»: (ալ-Բակարա 2:79)

(فَوَيْلٌ لَّهُم مِّمَّا كَتَبَتْ أَيْدِيهِمْ وَوَيْلٌ لَّهُم مِّمَّا يَكْسِبُونَ) البقرة/79

<u>Զառախաղ խաղալը</u>

Շատ տարածված խաղեր ներառում են այնպիսի տարրեր, որոնք հանդիսանում են հարամ; դրանց մեջ գոյություն ունեն խաղեր, որտեղ մասնիկները շարժվում են ըստ զառի շարժման, ինչպիսիք են նարդին և այլն: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) զգուշացրեց, որ տվյալ զառը հնարավորություն է տալիս խաղամոլության. «Նա, ով խաղում է զառի հետ, կարծես իր մատը խորը մտցնում է խոզի մարմնի և արյան մեջ»: (Հաղորդեց Մուսլիմ 4/1770) Աբու Մուսան, (թող Ալլահը գոհանա նրանով) հաղորդեց, որ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Նա, ով զառերով է խաղում չի հնազանդվում Ալլահին և Նրա Մարգարեին»: (Հաղորդեց Իմամ Ահմեդ 4/394; տես նույնպես Սահիիհ ալ-Ջաամի 6505)

" من لعب بالنردشير فكأنما صبغ يده في لحم خنزير ودمه " رواه مسلم 1770/4. وعن أبي موسى رضي الله عنه مرفوعا: " من لعب

بالنرد فقد عصى الله ورسوله " رواه الإمام أحمد 394/4 وهو في صحيح الجامع 6505.

**<u>Անիծել հավատացյալին, կամ որևէ մեկին, ով արժանի չէ.</u>**

Շատերը չեն կառավարում իրենց լեզուները բարկության ժամանակ և արագ անիծում են մարդկանց, կենդանիներին, աներևակայելի առարկաներին, օրերին, ժամերին և այլն: Նրանք նույնիսկ կարող են անիծել իրենց և իրենց զավակներին կամ ամուսինը կարող է անիծել իր կնոջը և հակառակը: Սա լուրջ խնդիր է հանդիսանում: Աբու Զայդ Թաբիթ իբն ալ-Դահհակ ալ-Անսարին (թող Ալլահը գոհանա նրանով) հաղորդեց որ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.«…նա, ով անիծում է հավատացյալին, կարծես նա սպանում է նրան»: (Հաղորդեց ալ-Բուխարին, տես Ֆաթհ ալ-Բաարի 10/465)

عن أبي زيد ثابت بن الضحاك الأنصاري رضي الله عنه مرفوعا: "....، ومن لعن مؤمنا فهو كقتله " رواه البخاري

Քանի որ անեծքը ավելի տարածված է կանանց շրջանում, Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) բացատրեց, որ դա կհանդիսանա Դժոխքի մուտքի պատճառներից մեկը և որ նրանք, ովքեր անիծում են Հարության Օրը բարեխոսներ չեն լինի: Ավելի լուրջ քան այդ փաստը այն է, որ անեծքը կգա դեպի նա, ով արտաբերում է , եթե նա ասի դա անարդար կերպով; այդ դեպքում նա կաղոթի իր դեմ և կհեռանա Ալլահի գթասրտությունից:

**<u>Ողբը մահվան ժամանակ</u>**

Որոշ կանանց հարամ արարքներից մեկը բարձր ձայները և հանգուցյալի գովաբանելը, դեմքերին հարվածելը, հագուստի պատռելը, մազերի կտրելը կամ պոկելն է և այլն:Այս ամենը նշում է, որ անհատը չի ընդունում Ալլահի որոշումը և աղետը չի հանդուրժում տոկունությամբ և համբերությամբ: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) անիծեց նրան, ով այդպես է գործում:Աբու Ումամահը, (թող Ալլահը գոհանա նրանով) հաղորդեց, որ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) անիծում է կնոջը, ով հարվածում է դեմքին, պատռում է հագուստը և լաց է լինում և բացականչում է դժբախտության և աղետի մասին: (Հաղորդեց Իբն Մաջահ 1/505; տես նույնպես Սահիհի ալ-Ջամի 5068) Աբդուլլահ իբն Մասուդը, (թող Ալլահը գոհանա նրանով) հաղորդեց, որ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Նա մեզանից մեկը չէ, ով հարվածում է այտերին, պատռում է հագուստները և աղոթում է Ջահիլիյայի աղերսներով»: (Հաղորդեց ալ-Բուխարին տես Ֆաթհ ալ-Բարի 3/163) Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Եթե կինը, ով ողբում է, չապաշխարհի մահից առաջ, Հարության Օրը նա ոտքի կկանգնի կրելով կուպրե վերնաշապիկ և կեղյա հագուստ»: (Հաղորդեց Մուսլիմ h. 934)

عن أبي أمامة رضي الله عنه أن رسول الله صلى الله عليه وسلم لعن الخامشة وجهها والشاقة جيبها والداعية بالويل والثبور " رواه ابن ماجة 1/505 وهو في صحيح الجامع 5068. وعن عبد الله بن مسعود رضي الله عنه مرفوعا: " ليس منا من لطم الخدود وشق الجيوب ودعا بدعوى الجاهلية " رواه البخاري.

وقال النبي صلى الله عليه وسلم: " النائحة إذا لم تتب قبل موتها تقام يوم القيامة وعليها سربال من قطران ودرع من جرب " رواه مسلم رقم 934

<u>**Դեմքին հարվածելը, կամ դրոշմը**</u>

Ջաբիրն ասաց. «Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) արգելեց դեմքին հարվածելը կամ դրոշմելը»: (Հաղորդեց Մուսլիմ 3/1673)

عن جابر قال نهى رسول الله صلى الله عليه وسلم عن الضرب في الوجه وعن الوسم في الوجه. رواه مسلم 1673/3

Քանի որ դեմքին հարվածելը մտահոգիչ է, շատ հայրեր և ուսուցիչներ որպես պատիժ կիրառում են դա, երբ նրանք հարվածում են իրենց ձեռքով դեմքին և այլն; ոմանք այդպես են վարվում իրենց ծառաների հետ, նույնիսկ եթե այն վիրավորանք է հանդիսանում, քանի որ Ալլահը դեմքը պատվել է մարդուն: Հետևյալը կարող է պատճառ հանդիսանալ դեմքի որոշ կարևոր զգայարանների կորստի, որը առաջնորդում է ափսոսանքի և հատուցման հնարավոր պահանջի:

Կենդանու դեմքի դրոշմը հնարավորություն է տալիս կորստի դեպքում տարբերակել այն: Սա հանդիսանում է հարամ, որովհետև պատճառում է տառապանք և այլանդակություն: Եթե մարդիկ հայտնում են, որ դա իրենց տոհմային սովորություն է և որ տարբերակիչ նշանը անհրաժեշտություն է, դաջվածքը պետք է լինի կենդանու մարմնի այլ մասում, ոչ թե դեմքին:

**<u>Առանց որևէ հիմնավոր պատճառի երեք օրից ավել Մահմեդական եղբորից հրաժարվելը</u>**

Սա հանդիսանում է այն ուղիներից մեկը, որով Շեյթանը բաժանում է Մահմեդականներին և նրանք, ովքեր հետևում են Շեյթանի հետքերին կարող են հրաժարվել Մահմեդական եղբորից առանց հիմնավոր պատճառի, գումարի կամ որևէ այլ աննշան անհամաձայնության պատրվակով: Տվյալ բաժանումը կարող է շարունակվել ամբողջ կյանքի ընթացքում, երբ անհատը երդվում է, որ երբեք չի խոսի մյուսի հետ և երդվում է երբեք ոտք չդնել նրա տուն, շրջվում է, եթե տեսնում է նրան փողոցում և արհամարհում է նրան, եթե նա հանդիպում է հավաքույթի ժամանակ, թափահարելով յուրաքանչյուր ձեռքը, բացառությամբ նրա: Սա Մահմեդական համայնքի թուլության պատճառ է, ուստի կանոնը որը վերաբերվում է դրան որոշիչ է և զգուշացումը խիստ: Աբու Հուրեյրան (թող Ալլահը գոհանա նրանով) հաղորդեց, որ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Մահմեդականին չի թույլատրվում հրաժարվել իր եղբորից ավելի քան երեք օր, նա, ով այդպես է վարվում և կնքում է մահկանացուն, մտնում է Դժոխք;» (Հաղորդեց Աբու Դաուդը, 5/215 , տես նույնպես Սահիհ ալ-Ջաամի 7635)

Աբու Քուրաաշ ալ-Ասլամին (թող Ալլահը գոհանա նրանով) հաղորդեց, որ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Նա, ով հրաժարվում է իր եղբորից մեկ տարի, կարծես նա թափում է իր արյունը»: (Հաղորդեց ալ-Բուխարին ալ-Ադաբ ալ-Մուֆրադ աշխատության մեջ, պատում հ. 406; տես նույնպես Սահիհ ալ-Ջաամի 6557)

عن أبي هريرة رضي الله عنه مرفوعا: " لا يحل لمسلم أن يهجر أخاه فوق ثلاث فمن هجر فوق ثلاث فمات دخل النار " رواه أبو داود 215/5 وهو في صحيح الجامع 7635.

وعن أبي خراش الأسلمي رضي الله عنه مرفوعا: " من هجر أخاه سنة فهو بسفك دمه " رواه البخاري في الأدب المفرد حديث رقم 406 وهو في صحيح الجامع 6557.

Բավականին վատ է, որ Մահմեդականների բաժանումը պատճառ է հանդիսանում Ալլահի թողության զրկանքի, թող Նա փառաբանվի: Աբու Հուրեյրան հաղորդեց, որ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Մարդկանց արարքները շաբաթը երկու անգամ, Երկուշաբթի և Հինգշաբթի օրերը տեսնում է Ալլահը: Նա ներում Իր բոլոր հավատացյալ ծառաներին, բացառությամբ նրա, ում և եղբոր միջև գոյություն ունի թշնամություն: Նա ասում է 'Թողեք այդ երկուսին, մինչ նրանց հաշտությունը'»: (Հաղորդեց Մուսլիմ 4/1988)

عن أبي هريرة مرفوعا: " تعرض أعمال الناس في كل جمعة مرتين، يوم الإثنين ويوم الخميس فيغفر لكل عبد مؤمن إلا عبدا بينه وبين أخيه شحناء فيقال: اتركوا أو أركوا (يعني أخروا) هذين حتى يفيئا " رواه مسلم 1988/4.

Երկու կողմերից յուրաքանչյուրը, ով ապաշխահում է Ալլահին, այնուհետ պետք է գնա իր եղբոր մոտ և ողջունի նրան սալամ-ով, եթե նա այդ անում է և մյուսը արհամարհում է նրան,ապա նախորդը զերծ է մնում

մեղադրանքից և պատասխանատվությունը ընկնում է վերջինիս վրա: Աբու Այուբը հաղորդեց, որ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Թույլատրելի չէ տղամարդուն հրաժարվել իր եղբորից ավելի քան երեք գիշեր, շրջվելով հանդիպման ժամանակ:Երկուսից լավագույնը նա է, ով առաջինն է ողջունում մյուսին սալամ բառով»: (Հաղորդեց ալ-Բուխարին, Ֆաթհ ալ-Բաարի 10/492)

عن أبي أيوب مرفوعا: " لا يحل لرجل أن يهجر أخاه فوق ثلاث ليال يلتقيان فيعرض هذا ويعرض هذا وخيرهما الذي يبدأ بالسلام " رواه البخاري

Գոյություն ունեն հիմնավոր պատճառներ, երբ հրաժարվում են անհատից, օրինակ այն, որ նա չի աղոթում, կամ շարունակում է անբարոյականությունը: Եթե հրաժարությունը կստիպի նրան գիտակցել և տվյալ կերպ տեսնել իր սխալը, ապա անհրաժեշտ է հրաժարվել նրանից, սակայն, եթե դա նրան միայն ավելի համառ կդարձնի և նա կշարունակի իր մեղքը, ապա ճիշտ չէ հրաժարվել նրանից, որովհետև տվյալ արարքը չի հասցնի որևէ արդյունքի: Նրան լքելը միայն կբարդեցնի ամենը, այսպիսով ճիշտ ուղղին է շարունակել բարի վերաբերմունքը , խորհուրդը և հիշեցումը:

Որպես եզրակացություն, սա այն է, ինչ Ալլահը պատվիրել է ինձ գրել արգելքների մասին, որոնք խորապես արհամարհում են: Սա երկար թեմա է հանդիսանում և ընթերցողի հետագա օգտի համար գոյություն ունի մեկ այլ գլխի կարիք, որտեղ կտրվի Ղուրանի և Սուննայի մեջ նշված արգելքների խումբը: Աստծո կամոք, դա կլինի առանձին աշխատություն: Ես խնդրում եմ Ալլահին, թող

բարձրյալ լինի և փառաբանվի, Իր Ամենագեղեցիկ Անուններով, տալու մեզ բավարար իրազեկություն և վախ Նրանից, մեզ ետ պահելու մեղքից և բավարար նվիրվածություն և հնազանդություն Նրան, որպեսզի օգնի մեզ հասնել Նրա Դրախտը, ների մեզ մեր մեղքերը և Իր շնորհով մեզ օգնել լիանալ այն բանով ինչ Նա թույլատրել է և մեզ հեռու պահի այնից, ինչ Նա արգելել է: Թող Նա ընդունի մեր ապաշխարհությունը և մաքրի մեզ մեղքից, քանի որ Նա Ամենալսողն է և Մեկը, Ով պատասխանում է աղոթքներին: Թող Ալլահի խաղաղությունը և օրհնանքը լինի Անուսում Մարգարեին, Մուհամմեդին և նրա ընտանիքին և ուղեկցորդներին: Ամբողջ փառքը Ալլահին, Աշխարհների Տիրոջը:

Մուհամմեդ Սաալիհ ալ-Մունաաջիդ

P.O Box 2999

Ալ-Խոբար

Սաուդյան Արաբիա

IslamHouse.com